Հավելված
ՀՀ վարչապետի 2014 թ.
փետրվարի 24-ի N 134 - Ա
որոշման

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Ց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

NN ը/կ	Ծրագրային գործողությունները	Պատասխանատու գերատեսչությունը	Կատարման վերջնաժամկետը
1.	ՄԺԾԾ-ն և բյուջետային գործընթացները ներառում են ոլորտային կատարողական ցուցանիշների թիրախներ, արդյունքների մասին հաշվետվության և աուդիտային գործընթացներ	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե ՀՀ ֆինանսների նախարարություն	30.06.2015 թ.
	1) ստեղծել ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության գլխավորությամբ խորհրդատվական մարմին ճանապարհների պահպանության համակարգման համար	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	08.01.2014 թ. (կատարված է)

2.	2) հաստատել ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կազմակերպչական կառուցվածքը և համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների լիազորությունների շրջանակը՝ ճանապարհային ոլորտի գործակալությունների գործառույթները ներդաշնակեցնելու համար	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	28.02.2014 թ.
	3) նախաձեռնել ջրամատակարարման ոլորտի հիմնական գերատեսչություններում ու կազմակերպություններում (ջրային ռեսուրսների և համակարգերի կառավարման, կարգավորման և պահպանման մարմիններ) գործառույթների վերանայման առաջարկությունները ներկայացնելը, այդ թվում՝ ա. մինչև 2014 թ. փետրվարի 28-ը մշակել ոլորտում գործող գերատեսչությունների ու կազմակերպությունների գործառույթների, տեղեկատվական հոսքերի, դերերի ու պատասխանատվությունների ուսումնասիրության աշխատանքների իրականացման համար տեխնիկական բնութագիրը, մասնավորապես, նպատակը, շրջանակը (ուսումնասիրություն իրականացնող և գործառույթների վերանայման ենթակա գործակալությունների ցանկի սահմանումը), ժամանակացույցը, բ. տեխնիկական բնութագրին համապատասխան իրականացված ուսումնասիրության արդյունքներով պայմանավորված միջոցառումներն իրականացնել մինչև 2014 թ. նոյեմբերի 30-ը	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե	31.01.2014 թ. և աշխատանքներն ավարտել մինչև 30.11.2014 թ
	4) հաստատել ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի ռազմավարությունը և դրան կից ֆինանսավորման ծրագիրը	ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե	31.12.2014 թ.
	5) ընդունել ՀՀ կառավարության որոշում՝ ներդաշնակեցնելով 2002 թ. ՀՀ Ջրային օրենսգիրքը, դրան առնչվող իրավական ակտերը և ջրային ոլորտի ռազմավարությունը միմյանց հետ	ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ տարածքային կառավարման	31.05.2015 թ.

		նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե	
3.	1) ընդունել ճանապարհների պահպանման 2015 թ.-ի բյուջետա-յին թիրախների ֆինանսական ռազմավարություն	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն ՀՀ ֆինանսների նախարարություն	30.11.2014 թ.
	2) վավերացնել Ճանապարհային ակտիվների կառավարման վրա հիմնված ճանապարհների պահպանման ծախսերը ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության գլխավորությամբ խորհրդատվական մարմնի կողմից	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	31.08.2015 թ.
	3) ընդունել ջրային և ճանապարհային ոլորտների համար կատարողականի հիմնական ցուցանիշի վրա հիմնված ՄԺԾԾ-ն՝ ներառյալ որակական ցուցանիշները	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե	31.07.2014 թ.
	4) ՀՀ կառավարության կողմից պետք է ներկայացվի քաղաքա-կանություն՝ ջրային ոլորտում իր բաժնետիրական դերի մասին, ինչպես նաև հստակ սահմանվեն ջրամատակարարման ոլորտի սուբսիդիաների նպատակները	ՀՀ ֆինանսների նախարարություն	30.06.2014 թ.
	5) մշակել գործողություններ և սակագնային թիրախներ՝ իրենց՝ որպես բաժնետեր ունեցած դերի ու ֆինանսական դիրքի հիման վրա	ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե ՀՀ ֆինանսների նախարարություն	30.09.2014 թ.

4.	1) հստակեցնել պետական, հանրապետական և տեղական նշանակության ճանապարհների համար ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կարգավորող գործառույթները	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	01.02.2014 թ. (կատարված է)
	2) պաշտոնապես ստեղծել ոլորտը կարգավորող մարմին Հայաստանի ամբողջ ճանապարհային ցանցի համար	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	01.02.2014 թ. (կատարված է)
	3) ապահովել սպառողների հետ հետադարձ կապը և բողոքների մշակման օպտիմալ համակարգը, որը կներդրվի ՀՀ տրանս-պորտի և կապի նախարարության և ՀՀ հանրային ծառայու-թյունները կարգավորող հանձնաժողովի կարգավորող մարմնում	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով	01.02.2014 թ. (կատարված է)
5.	1) պատրաստել Հայաստանի միջպետական և հանրապետական նշանակության 1,500 կմ պահպանվող ճանապարհների և ՀՀ-ում վերականգնված ճանապարհների 100 %-ի տեսագրված գույքա-ցանկը	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	08.01.2014 թ., իսկ ամբողջ ճանապարհային ցանցինը՝ մինչ 31.12.2015 թ.
	2) հաստատել ջրային ոլորտի ֆինանսական վիճակի և ֆինան-սական հոսքերի (կանխիկ և ոչ կանխիկ) հաշվարկման շրջանակը	ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե	31.01.2014 թ. (կատարված է)
	3) ընդունել ռիսկերի վրա հիմնված աուդիտի պլանավորում ճանապարհային և ջրային ոլորտների համար	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե	31.01.2015 թ.
	4) ներդնել ճանապարհային ակտիվների կառավարման համա-կարգը՝ ներառյալ Ճանապարհների տեսագրված գույքացանկի՝ որպես ներդրումային որոշումներ ընդունելու գործիք	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	31.10.2014 թ.

	5) ընդունել «Մասնաբաժին 1» և «Մասնաբաժին 2»-ում Միջազ-գային անհարթության ինդեքսի ամենամյա մշտադիտարկման գործընթացը	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	31.01.2014 թ., և իրականացվում է՝ սկսած 2015 թ.-ից
	6) հաստատել գործողությունների ծրագիր ջրամատակարարման ակտիվների կառավարման համար	ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե	08.01.2014 թ. (կատարված է)
	7) կազմել պետության կողմից կարգավորվող օպերատորների կողմից կառավարվող ջրային ոլորտի ակտիվների ռեգիստր	ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե	31.11.2014 թ.
	8) հաստատել բյուջեի կատարողականի առնչությամբ ճանա-պարհային և ջրային ոլորտների կատարողականի հիմնական ցուցանիշների կանոնավոր մշտադիտարկումը (միջազգային անհարթության ինդեքսը ներառյալ)	ՀՀ ֆինանսների նախարարություն	31.12.2014 թ.
	9) ստեղծել ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունում և ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեում աուդիտորական կոմի-տեներ՝ վերջիններիս կազմում ոչ պետական հատվածից անդամ-ների ներգրավմամբ	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե	31.12.2015 թ.
	10) ներքին աուդիտի որակավորման համակարգի կանոնակար-գում, ներառելով շարունակական մասնագիտական վերապատ-րաստման ծրագրերի պարտադիր առկայությունը	ՀՀ ֆինանսների նախարարություն	2014 թ. հունվարից սկսած
	11) ներքին աուդիտորների շարունակական մասնագիտական վերապատրաստման ծրագրերի կառուցվածքում պրակտիկ գիտելիքների ստուգման մեխանիզմի ներդրում	ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	2014 թ. հուլիսից սկսած

	12) հրապարակել աուդիտի ենթարկված ջրային տնտեսության համակարգի օպերատորների (ՓԲԸ-ներ) ֆինանսական հաշ-վետվությունները ՀՀ տարածքային կառավարման նախարա-րության ջրային տնտեսության պետական կոմիտեի ինտերնետային կայքում	ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե	2014 թ. հունվարից սկսած
	13) ընդունել հանրային տեղեկատվության պլանը և ներդնել ճանապարհային և ջրային ոլորտներում	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե	2014 թ. փետրվարից սկսած
	14) բացատրել ջրամատակարարման սակագները ձևավորող բաղադրիչները և համեմատել ջրամատակարարող տարբեր ընկերությունների կողմից գանձվող սակագները հանրության համար	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով	31.01.2014 թ. (կատարված է)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ